

1+1

Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ՄԱՐՏԻ 2021թ. թիվ 3 (24)

ՈՒՋՈՒԲԱ ԵՍ ԽԱՂԱՎՈՒՄԻՅՈՒՆ, ՊԱՏՐԱՍԿԻՐ ՊԱՏԵՐԱԶԱՐ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԵՐՈՍԵՐԸ



2020 թվականի սեպտեմբերի 27-ը իր սև հետքը թողեց նաև Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում:
ՄԱՍԻԿՈՆՅԱՆ ՍԵԼԻՔ ԱՐԱՍԱՅԻՍԻ - ծնվել է 1997 թվականին, Գեղարքունիքի մարզի Փոքր Սասրիկ գյուղում: Նրա մանկությունը անհոգ չի անցել, ընտանիքի պատասխանատվությունը ընկել է նրա ուսե-

րին, երբ զրկվել է հորից:
Աշխատասեր և պատասխանատու պատանու մոտ հայրենասիրությունը արյան մեջ էր, նա միշտ քննադատում էր այն մարդկանց, ովքեր բարեկեցիկ կյանքը նախընտրում էին հայրենիքից: Շատ էր սիրում գրքեր կարդալ, դպրոցում սիրած առարկան «Պատմություն» էր: Սիրում էր քննարկել մեր ժողովրդի անցած ուղին և ուներ իր սեփական դիրքորոշումը: Սիրում էր ֆուտբոլ խաղալ, բայց շատ ազատ ժամանակ չէր ունենում, որովհետև պետք է օգներ մորը և Սիրանուշ տատիկին: Դպրոցի տնօրեն պարոն Դովհաննիսյանը նրան բնորոշեց կարճ «Լավ մարդ», և հետո ավելացրեց Սելիքի խոսքերը. «Տղամարդու չափանիշը հայրենասիրությունն է»: Սեփական ուժերով համձնում է քննությունները, ստանում է բարձր միավորներ, սակայն, սոցիալական պայմաններից էլնելով, չի կարողանում ուսումը շարունակել, բայց չի ընկճվում:
«Քարվաճառում կամավորական էր,- պատմում է պարոն Դովհաննիսյանը,- քանի ես դիրքերում եմ, դուք խաղաղ կքնեք»: Անվախ էր, ինչպես հզոր արծիվ իր օրինակը ուսանելի էր շրջապատին:
ՂԱՍԻՔՆԱՆ ԱՐԱՅԻԿ ՍԱՐՈՒՄԱՆԻ - 41 տարեկան, վեց երեխաների հայր, որից 4-ը անչափահաս են: Բնակվում էր Գեղարքունիքի մարզի Փոքր Սասրիկ գյուղում:
Հասարակության մեջ մեծ հարգանք էր վայելում, սիրում էր իր գյուղը և մեծ սիրով զբաղվում էր գյուղատնտեսությամբ. նրա հորքին գյուղատնտեսություններով աշխատելն էր:
Սիրում էր իր աշխատանքը, լավ հայր ու շատ լավ ամուսին էր, ոչինչ չէր խնայում, որ ընտանիքի անդամներին օրը հետաքրքիր և անակնկալներով լցներ: Ընկերասեր էր:
Պատերազմի հենց առաջին օրը կամավորագրվում է, չնայած որ ինքը բազմազավակ հայր էր, և նրան հորդորում են չզնայ առաջնագիծ, բայց նա մերժում է ասելով, որ եթե ամեն մեկը չգնա, ի՞նչ է լինելու վերջը:
Կնոջը վերջին անգամ զանգել է հոկտեմբերի 10-ին

և խնդրել, որ լավ պահի երեխաներին:
Նա գնաց, որ իր երեխաները ապրեն խաղաղ, որ իր հոգին հանգիստ հսկի հայրենի հողի սահմանները:
ՂԱՎԻԴՅԱՆ ԵՆՈՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ - Բնակվում էր Գեղարքունիքի մարզի Փոքր Սասրիկ գյուղում: 5 տարեկանից մնացել է մոր խնամքին, դժվար մանկությունը նրան չի կրտրել, այլ մեծ արմատներ է գցել սերը դեպի հայրենիքը: Իր պարտքը հայոց բանակին տալուց հետո չի մտածել լքել հայրենիքը և բռնել արտագաղթի ճանապարհը, այլ նորից անդամագրվել է և որպես կամավոր ծառայության անցել Քարվաճառում:
Ինչպես ինքն էր մեծացել առանց հոր սիրո և աջակցության, ցավով, նույն բախտին արժանացան Ենոքի զավակները, ովքեր միշտ պատվով կխոսեն և կհիշեն հերոս հոր մասին: Մայրը շատ էր ափսոսում, որ որդու երազանքները մնացին կիսատ, բայց խոստանում էր, որ ուժ կգտնի, և թոռների հետ նրանց հոր երազանքը կկատարեն: Ենոքը հետմահու պարգևատրվել էր «Մարտական ծառայություն» մեդալով: Շատ ընկերասեր էր, նվիրված իր գործին, վիրավոր ժամանակ նույնիսկ ընկերներին մենակ չի թողել, այլ լաթի կտորով փաթաթել է վերքը և ամրակով ամրացրել ու միացել ընկերներին, խնդրել, որ էլ չխոսեն ու չասեն, որ պետք է հոսպիտալ տեղափոխվի: Մասնակցել է ապրիլյան բառօրյա պատերազմին: «Հպարտ եմ, որ հերոս որդի ունեմ, բայց չեմ ցանկանա, որ որևէ մեկը զգա այն, ինչ որ մենք ենք զգում: Թող աշխարհի երեխաները երբեք չզգան իրենց ծնողի կորուստը»:



նոգին անմահ է», - ասում է հայրը:
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՋԱՐՁԱՆԴ ՆԵՐՍԻԿԻ - հերոսը ծնվել է Մեծ Սասրիկում, մանկությունը անցկացրել է հայրենի գյուղում, հայրենիքին պարտքը տալուց հետո անցնում է ծառայության Սոթքում: Ծառայության ընթացքում նկատելով նրա ռազմական կարողություններն ու ունակությունները հրամանատարական կազմը նրան առաջարկում է ուսումը շարունակել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում, որը կնպաստեր նաև զինվորական կոչման բարձրացմանը: Նա 31 տարեկանում կամավորագրվում է: Հայրենիքը նրա համար ամեն ինչ էր:
Աշխատել է Ջաբրահիլի գործառնաում որպես մարտկոցի դասակի հրամանատար: Մեծ հարգանք էր վայելում իր զինակիցների կողմից, եթե ունեցել է դժվարություններ, չի տրտնջացել: Ոչ մի անգամ չի մտածել հայրենիքը լքելու և մեծ փողեր աշխատելու մասին. շատ երազանքներ ուներ, բայց ամենամեծ երազանքը դստեր իրեն «պապա» ասելն էր, բայց այս ամենը մնաց անկատար:
Նրանք մարտեցին հանուն մեր ազատության և խաղաղության: Թող բոլորը կարողանան գտնել իրենց մեջ այն գերբնական ուժը, որով կկարողանան ապրել և ապրեցնել իրենց ժառանգներին: Հայրենիքի սահմանների պաշտպանության համար իրենց անունները հավերժացրին նաև մեր մյուս հերոսները. Արա Խաչատրյան Էդգարի Համլետ Աղաբեկյան Արայիկի

րին, երբ զրկվել է հորից:
Աշխատասեր և պատասխանատու պատանու մոտ հայրենասիրությունը արյան մեջ էր, նա միշտ քննադատում էր այն մարդկանց, ովքեր բարեկեցիկ կյանքը նախընտրում էին հայրենիքից: Շատ էր սիրում գրքեր կարդալ, դպրոցում սիրած առարկան «Պատմություն» էր: Սիրում էր քննարկել մեր ժողովրդի անցած ուղին և ուներ իր սեփական դիրքորոշումը: Սիրում էր ֆուտբոլ խաղալ, բայց շատ ազատ ժամանակ չէր ունենում, որովհետև պետք է օգներ մորը և Սիրանուշ տատիկին: Դպրոցի տնօրեն պարոն Դովհաննիսյանը նրան բնորոշեց կարճ «Լավ մարդ», և հետո ավելացրեց Սելիքի խոսքերը. «Տղամարդու չափանիշը հայրենասիրությունն է»: Սեփական ուժերով համձնում է քննությունները, ստանում է բարձր միավորներ, սակայն, սոցիալական պայմաններից էլնելով, չի կարողանում ուսումը շարունակել, բայց չի ընկճվում:
«Քարվաճառում կամավորական էր,- պատմում է պարոն Դովհաննիսյանը,- քանի ես դիրքերում եմ, դուք խաղաղ կքնեք»: Անվախ էր, ինչպես հզոր արծիվ իր օրինակը ուսանելի էր շրջապատին:
ՂԱՍԻՔՆԱՆ ԱՐԱՅԻԿ ՍԱՐՈՒՄԱՆԻ - 41 տարեկան, վեց երեխաների հայր, որից 4-ը անչափահաս են: Բնակվում էր Գեղարքունիքի մարզի Փոքր Սասրիկ գյուղում:
Հասարակության մեջ մեծ հարգանք էր վայելում, սիրում էր իր գյուղը և մեծ սիրով զբաղվում էր գյուղատնտեսությամբ. նրա հորքին գյուղատնտեսություններով աշխատելն էր:
Սիրում էր իր աշխատանքը, լավ հայր ու շատ լավ ամուսին էր, ոչինչ չէր խնայում, որ ընտանիքի անդամներին օրը հետաքրքիր և անակնկալներով լցներ: Ընկերասեր էր:
Պատերազմի հենց առաջին օրը կամավորագրվում է, չնայած որ ինքը բազմազավակ հայր էր, և նրան հորդորում են չզնայ առաջնագիծ, բայց նա մերժում է ասելով, որ եթե ամեն մեկը չգնա, ի՞նչ է լինելու վերջը:
Կնոջը վերջին անգամ զանգել է հոկտեմբերի 10-ին



ԱՆԱՅՆԱՆ ՍԱՍՎԵԼ ԱՆԱՏՈՒԻ - ծնված 1988 թվականի նոյեմբերի 30-ին, Գեղարքունիքի մարզի Փոքր Սասրիկ գյուղում:
Մանկուց սիրել է զինվորական համազգեստը, քանի որ տանը միշտ զգացել է հայրենիքի պաշտպանի ոգին. հայրը նույնպես զինվորական էր: Ծառայելով հայոց բանակում իր սերն ու նվիրվածությունն է դրսևորել հայրենիքի նկատմամբ: Նա կապավոր էր: Հմուտ էր վարվում զենքի հետ, տիրապետում էր տարբեր մարտական զենքերի: Մասնակցել է քառօրյա պատերազմին: Անվախ էր, երբեք չի ընկճվել և ցույց չի տվել, որ դժվարություններ ունի: Շատ էր սիրում իր գործը, հայրենասիրությունը նրա գեների մեջ էր: Նա իր սեփական մեքենայով սնունդ ու ռազմամթերք էր մատակարարում, չէր վախենում և բոլորին խրախուսում և հորդորում էր, որ դառնան մի բռունցք, որ կարողանան հաղթահարել ծանր պահերը: Պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:
Հայրը, ով մանկուց էր զբաղվել որդու խնամքով, հպարտությամբ էր խոսում որդու մասին և ասում, որ լավ մարդ է դաստիարակել: «Նա միշտ ինձ հետ է, նրա

Սուրիկ Ավետիսյան Իշխանի Էդվարդ Պետրոսյան Մանվելի Գառնիկ Խաչատրյան Հուսիկի Նարեկ Հովհաննիսյան Կամսարի Արծրուն Սիմոնյան Ժիրայրի Արտաշես Ջանիբեկյան Կորյունի Կամո Մինասյան Մանվելի Վարդան Պողոսյան Դերենիկի Լևոն Սևոյան Մեխակի Սրսեն Մաղոյան Վարուժանի Սևնիկ Մովսիսյան Արայի Ջավեն Հակոբյան Ստեփանի Ռազմիկ Մկրտչյան Գալուստի Վարդան Թադևոսյան Սերյոժայի Մուշեղ Գալստյան Արամի Միքայել Կարապետյան Գուրգենի Արամ Դուկասյան Կամոյի Գլուխ ենք խոնարհում բոլոր այն մայրերի առջև, որոնց զավակները անմահացան հանուն հայրենիքի փրկության:
«1+1» թերթի խմբագրություն

ՆՇՂԵԿԻ ՀՈՒՆԵՐԻՑ

Գարեգին ՆՇՂԵԿԻ աշխատանքներում առանձնահատուկ արժեք ունեն երիտասարդությանն ուղղված պատգամները: Նրա գործունեության ու բազմաթիվ ուսումնասիրությունների առանցքը մշտապես եղել է հայ երիտասարդությանը ազգային և հայրենասիրական ոգով դաստիարակելու խնդիրները: Նրան հատկապես մտահոգել է հայապահպանության, երիտասարդության և համահայկական խնդիրների լուծման շուրջ համախմբելու հիմնախնդիրը: Վերոհիշյալ նպատակների իրականացման գործում հաջողելու համար ՆՇՂԵԿԻ առանձնացնում է մի քանի գործոն.

- ա/ դպրոցը
- բ/ մայրը
- գ/ մտավորաններ
- դ/ մամուլի դերը:

Բնութագրելով իր ժամանակաշրջանը ՆՇՂԵԿԻ գրում է. «Չկա, պակասում է բոլորին, դպրոցին, մամուլին, գրողին այն աստվածաշունչ զգացմունքը, որն իր մեջ խտացնում է մարդկային բոլոր բարձր հատկությունները, չկա բարձր հայրենասիրությունը, հայրենապաշտությունը չկա...»: Այժմ վերլուծելով ՆՇՂԵԿԻ մտքերը փորձենք քննարկել երիտասարդության հայեցի դաստիարակության գործում վերոհիշյալ գործոնների դերը և նշանակությունը:

ա/ ԴՊՐՈՑ— Զննադատելով իր ժամանակաշրջանի հայկական դպրոցների կրթական գործընթացի բացթողունները և բերությունները Գ. ՆՇՂԵԿԻ գրում է. «Շեշտված նպատակը, ջերմությունը, հոգին է պակասում



մեր այդ դպրոցին: Նա է, որ պիտի լինի հայրենագիտության ամբիոնի տաճարը: Դեռ այնտեղ հայ մամուլը պիտի ճանաչի ու սովորի սիրել հայրենի ժողովրդին ու երկիրը...»:

Ազգային դաստիարակության նպատակը, ըստ ՆՇՂԵԿԻ, ազգային գիտակցության ձևավորումն է:

Գերազանցորեն հայրենապաշտ ահա թե ինչպիսին պետք է լինի պատմության ուսուցիչը, եթե այդպիսին չէ, ապա նրա տեղը դպրոցում չէ: ՆՇՂԵԿԻ երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության և կրթության գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, ի թիվս այլ գործոնների, պետք է ապահովվել հետևյալ պայմանները:

1. Հայրենասիրական մթնոլորտ:
2. Ազգային գիտակցության ձևավորմանը միտված աշխատանքներ և համապատասխան դասագրքեր:
3. Առարկայի դասավանդման զգացմունքային եղանակներ:
 - բ/ ՄԱՅՐԵՐԸ- ՆՇՂԵԿԻ մեծապես կարևորում է կնոջ, հայ մայրերի դերը: Նա հայ կնոջ միջոցով է տեսնում հայ ընտանիքի հոգեփոխման գործը և հայ ազգի հարատևության գրավակայանը. «Մայրերի մեջ պետք է փնտրել ազգի ճակատագիրը»,- նշում է նա:
- Հատկանշական է նաև ՆՇՂԵԿԻ հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ հայոց ազգային հոգեկեցվածքի վայել և միևնույն ժամանակ իր ժամանակի համար առաջադիմական դիրքորոշումը:

Ըստ որի ժողովրդի քաղաքակրթական մակարդակը մեծապես կախված է հասարակության մեջ կնոջ դերակատարությունից:

գ/ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ- Հասարակության այդ խավի, Եղեհական

տերմինաբանությամբ ճշմարիտ մտավորականությանը, ի թիվս այլ կարևոր գծերի, պետք է բնորոշ լինի.

1. բարոյական նկարագիրը,
2. բարձր գաղափարականությունը,
3. ստեղծագործելու նոր իդեալները, արժեքներ ստեղծելու ընդունակությունը,
4. հոգևոր արիությունը,
5. իր ժողովրդին խորապես սիրելու և նրա համար նվիրաբերելու կարողությունը:

Հասարակության մեջ մտավորականության շարժիչ վճռորոշ դերը ընդգծելու համար ՆՇՂԵԿԻ գրում է. «Պարտվում է մի ժողովուրդ, հենց որ իրեն պարտված է զգում իր մտավորականությունը: Կորած է այն ազգային դատը, որի ղեկավարները կորած են համարում այն: Այդ, հանձինս ժողովուրդների միջոց էլ չափվում են իրենց մտավորականությունները»:

դ/ ՄԱՍՈՒԼ- Անդրադառնալով մամուլի դերին ՆՇՂԵԿԻ գրում է. «Թերթեր ունենք, որոնք ավելի օգտակար պետք է լինեին հայ ժողովրդին, եթե բնավ նրանք լույս չտեսնեին»:

Թերթի պարտավորությունն է խտացած ճշմարտությունը տալ ժողովրդին, նա հատկապես նշում է մամուլի կրթատարակական նշանակությունը, նրա դերը հայ ազգի հոգևոր, բարոյական, ինքնապաշտպանական համակարգի ձևավորմանը:

Հարգելի ընթերցող, հուսանք՝ ժամանակը Ձեր օգնությամբ աշխատելու է ի օգուտ մեր պետականության:

ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ԴԱՍԸ

Անհայտ է որքան ժամանակ անցավ, մի պահի, երբ Պապը հիացած ունկնդրում է նվազը, Տերենտը, մեկեն կարծես մի բան հիշելով, ելավ տեղից: -Ների՛ր, արքա՛, ես մի քանի վայրկյան,- ասաց նա գլխի նուրբ շարժումով ու զմայց դեպի դուռը:

Սակայն դուռը չհասած Գնելը նկատեց, որ նա կանգնեց մի ակնթարթ ու ետ նայեց, ապա դուռը բանալով՝ աներևութացավ նրա հետ: Փոքր անց, նույնպես ներում խնդրելով, նույն կողմը զննեց և Աղոթ գորավարը՝ իր հաստ ուսերը ճռճելով:

Երբ Գնելը, դրան ևս հայացքով ուղեկցելուց հետո, գլուխը դարձրեց դեպի թագավորը, հանկարծ նկատեց, որ պատընդուս կանգնած հոռոմ զինվորներից մեկը՝ միջառասակ ու բարակ մի երիտասարդ, առաջ գալով կանգնեց թագավորի հետևը, ու հանկարծ... Գնելը նրա ձեռքին սուր տեսավ...

-Պաշտպանվի՛ր, արքա,- պոռաց նա ու տեղից պոկվելով վազեց դեպի թագավորը:

Նրան հետևեց երիտասարդ Չյունականը: Բայց մինչև տեղ կհասնեին, երկուսն էլ նկատեցին, որ թագավորն ընդուստ վեր թռավ բազմոցից, կանգնեց ամբողջ հասակով ու ձեռքը դժվարությամբ տարավ մեջքը՝ թիկունքը խրված սուրը բռնելով...

- Խարդախ... այս էր...- լսեց Գնելը թագավորի ձայնը և իր գարնանքի, հուզմունքի ու վազքի մեջ էլ չտեսավ, թե ինչպես թագավորը պաղած հայացքով ընկավ ճաշի սեղանին կողքից բխող արյունը խառնելով հյուրասիրության զինուն: Չտեսավ և այն, որ սեղանի շուրջ խառնվեցին իրար... Նա, դաշույնը հանած, գնաց դեպի թագավորին հարվածողը, որն այն է՝ շրջվել էր հեռանալու, Գնելը մոտեցավ, ավելի շուտ՝ մի երկու ցատկումով հասավ նրան և, աչքերը փակելով, դաշույնը բարձրացրեց... Ու ապա զգաց, թե ինչպես ծանր մի բան թափով դիպավ իր ոտքերին...

Այդ ժամանակ Գնելը վախեցած աչքերը բաց արեց և տեսավ՝ թագավորին հարվածողն ընկած իր առաջ, ու սրահում ամենքն իրար անցած...

Այդ պահին Գնելը ճշաց ու վազեց դեպի թագավորը, և երբ թագավորը հանկարծ ընկավ սեղանի վրա, ամենքը մեկեն գարնանքից քարացան մի վայրկյան, ապա հոռոմ զորականներից մի երկուսը վեր կացան ու շտապեցին դուրս, իսկ Բաթը առաջին իսկ վայրկյանին, սուրը մերկացնելով, ուզեց խոյանալ թագավորին պաշտպանելու, բայց չկարողացավ առաջ գնալ՝ հոռոմ զինվորները խառնվել էին առաջին... և այժմ նա սրով կամենում էր ճանապարհը բանալ, գնալ դեպի թագավորը... Սուր էր հանել և երեմիան...

Գնելն այդ տեսնելով վազեց դեպի Բաթն ու երեմիան:

-Վրե՛ն, օգնի՛ր,- գոռաց նա երիտասարդ Չյունականին ու նետվեց առաջ: Սակայն մինչև տեղ հասնելը ծանր մի հարված զգաց աջ ուսին և ընկավ մտածելով, որ դա երազ է կամ պատահմամբ, որ ինքը նորից կբարձրանա, կպաշտպանի թագավորին, իր պետ Բաթին, երեմիային և Չյունական Վրենին...

Այդ իսկ վայրկյանին, չգիտես Գնելի ճիշի՞, թե բարձրացած աղմուկի վրա, ճաշասրահի զույգ փեղկերը բացվեցին, ներս եկավ Տերենտը իր դիք հասակով և հուզված:

-Ո՛վ էր այդ,- պոռաց նա գայրագին: Վիրավորել թագավորի՞ն... Ո՛վ համարձակվեց...

Նրա ձայնի վրա հոռոմ զինվորները կանգ առան, իսկ Բաթը, նրան տեսնելով, ետ դարձավ և մի ցատկումով Տերենտին հասնելով՝ սուրը բարձրացրեց հանկարծ:

-Ահա՛՛ թեք, խարդախ արքայասպան,- մռնչաց նա ոչ մարդկային ձայնով, այդ մի քանի բառի մեջ դնելով կարծես տարիների իր ոխը, ատելությունն ու գայրույթը:

Եվ մինչ Տերենտը կրճկներ տապալվող ծառի պես, Բաթը, սուրն առաջ ճռճելով, բաց դռնից նետվեց դուրս:

-Բռնե՛լ: Չթողնե՛լ փախչի,- լսեց նա հետևից հուճարեն:

Եվ իրոք, տպավորությունն այն էր, թե նա փախչում է գլուխն ազատելու: Բայց մինչև կփորձեին հետևել, նա գլխաբաց վազեց ծառերի տակ կապված ձիերից մեկի մեջքը և սուրաց առաջ:

Եվ ոչ ոք չհետևեց նրան. նույնիսկ փորձ չարեցին. բոլորը խառնվել էին իրար, խառնվել էին Տերենտի շուրջ: Իսկ Բաթը ձիս փոթորկի պես քշեց դեպի անտառ: Քշեց, ինքն էլ չիմացավ ո՞րքան /նրան թվաց ժամեր/, վերջապես, երբ մոտեցավ անտառին և ծառերի տակ նկատեց թիկնապահ զնդի զինվորների, որ խուճը- խուճը նստոտած ու պառկած զրուցում էին հանգիստ, նա գոռաց ամբողջ կոկորդով մի ձայնով, որ դուրս էր գալիս ոչ միայն կրծքից, այլ ասես նրա սրտի խորքերից:

-Չինվորներ՛ր... զինվորներ՛ր... հոռոմները սպանեցին մեր թագավորին... Չա՛րկ հոռոմներին: Չա՛րկ հոռոմներին,- կրկնեց նա հեռապառ:

-Սեկը լուր տանի թող Հավնունու դղյակը, մյուսը՝ Սմբատ ասպետին... ի՞մացնել բոլորին... Թո՛ղ զան գնդերով... և... օ՛ն հետևեցեք ինձ...

Եվ նա մտույզի գլուխը դարձրեց նորից ու սրամերկ սուրաց առաջ:

Թիկնապահ զունդը ցնցվեց նրա խոսքերից, նրա տարօրինակ մագախաղով տեսքից, և մի ակնթարթում բոլորն անմիջապես, ձիերը հեծած ու կարծես մտրակված՝ հետևեցին նրան մորիկի պես վարակվելով իրենց պետի օրինակից:

Բոլորը սլանում էին նրա պես սրերը մերկացրած, ձիերի վրա կռացած, արծակված նետերի պես. թվում էր՝ հալածում են Բաթին, որ սուրուն էր իր ձիուն ձուլված, մի 20-30 քայլ նրանից առաջ:

Ամենքը ձգտում էին հասնել նրան, առաջել նրան:

Ու մի քանի վայրկյան հետո արդեն Տերենտի դղյակի մոտ էին:

Հուսանք, որ մեր կրթական նոր համակարգով կրթություն ստացած զինվորականները, իշխանության ներկայացուցիչները կծառայեն մեր պետական շահերին:

ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր առավոտյան թվում էր, թե, ինչպես միշտ, կրկնվում է այն ամենը, ինչ որ կատարվել կամ եղել է երեկվա ընթացքում:

Բայց կար մի բայց, որ ոչ մի ձևով չես կարողանում բացատրել այդ բայցը, դա այն մարդակեր պատերազմն էր, որը մեր հարևանների հետ ընթանում է արդեն մի քանի դար:

Ինչքանով է այն տունը, որտեղ մենք ապրում ենք, ընկալվում մերը, ինչքանով ենք այն Սարը ընկալում մերը. համազուլուղացիների ասելով՝ դա մերն է, և այն պետք է մնա մեր հետնորդներին: Պատերազմի օրերին այդ փոփոխությունները ավելի վառ

պետք է երևան, բայց... բայց... Ինչպես միշտ, մենք հասակակիցներով հավաքվում ենք գյուղամիջում և փորձում ենք պատասխաններ գտնել այն բոլոր բայցերին, որոնք ուղորդում են մեզ դարերի ընթացքում:

Մեր հարևան Սաղաթելը պատմում էր, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկիզբին, երբ Արևմտյան Հայաստանից մեր պապերը գաղթում էին Արևելյան Հայաստան, նրանց հիմնական նպատակն էր գտնել կյանքի ավելի բարեկեցիկ, ապահով տեղ, բայց ի՞նչ իրողության մեջ էին նրանք հայտնվել Արևելյան Հայաստանում, որը Ցարական Ռուսաստանի տարածքի մի մասն էր: Այստեղ ես պահպանվում էր նույն ազգային հա-

լածանքը, սակայն այն տարբերությամբ միայն, որ այստեղ նրանք ապահով էին ֆիզիկական բնաջնջումից:

Ինձ թվում է՝ մենք ունենք հոգեբանական մեծ խնդիրներ, որոնք կարող են լուծվել, երբ մեր կրթական մակարդակը բավարարի այնքան, որ մեր բնակչությունը կարողանա կարողալ այն գիրքը, ինչը կարողում են իրեան, ֆրանսիացին, գերմանացին, և հասկանա այն, ինչը հասկանում են նրանք:

Մի հնադարյան ասացվածքում գիտակցությունը համեմատում են ամանով ջրի հետ:

Եթե լցնեք մեկ գդալ աղ այդ ջրի մեջ, օրինակ՝ սուրճի բաժակի մեջ,

ջուրը կդառնա աղի, և դժվար թե այն խմելու ենթակա լինի:

Իսկ եթե ամանը մի քանի լիտրանոց տարա է, ապա ջրի համի վրա չի ազդի մի գդալ աղը:

Ե՛վ ջուրը և՛ աղը նույն են, բայց ձեր զգացողությունը, կյանքի փորձը տարբեր են:

Նույնը կարելի է ասել մեր գիտակցության մասին: Երբ մենք սովորում ենք ապրել գիտակցաբար, նկատում ենք, որ կյանքի որակը բարձրանում է, ինչպես ջրի համը, իսկ մտքի ուժը՝ ամրանում:

Հակոբ Սարիբեկյան
Վերին Գետաշեն

ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՏՈՒ ՄԱՐՏՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ

Ճամբարակի Մարտունի գյուղը 100 տարվա պատմություն ունի. բնակիչները գաղթել են Մուշից և Վանից: Գյուղը ունի մշակույթի տուն, մանկապարտեզ, միջնակարգ դպրոց, թեև դպրոցի աշակերտների թիվը 54 է, ուսուցումը իրականացվում է երկկուսյակով դասարաններով: Դպրոցի տնօրեն պարոն Ա. Խաչատրյանը երկար տարիներ է տնօրինում դպրոցում և շատ մտահոգված է թե՛ գյուղի և թե՛ իր ուսուցչական անձնակազմի մասին: Երկրում տիրող իրավիճակը միշտ զգոն է պահում բնակիչներին, իսկ նրանց ապագան մեր աշակերտներն են, և մեր պարտքն է նրանց ուսուցանել՝ բարդ իրավիճակներից դուրս գալու ելքեր գտնելու:

Համաձայն ԳՄՓՎ ճամբարակի թիվ 35 ՀՓՁ 2021թ. հատուկ տակտիկական ուսումնավարժությունների (այսուհետ՝ ՀՏՈՒ) պլան-ժամանակացույցի մարտի 17-ին թիվ 35 ՀՓՁ-ի 1-ին հերթափոխի կողմից անցկացվեցին հատուկ տակտիկական ուսումնավարժություններ ՀՏՈՒ Մարտունի վարչական բնակավայրի 3-րդ փողոցի 21 հասցեում գտնվող «Մարտունու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

ՀՏՈՒ-ի թեման Տարիանումը և հրդեհաշիջումը դպրոցում:

ՀՏՈՒ-ի մասնակիցները ԳՄՓՎ ճամբարակի թիվ 35 ՀՓՁ 1-ին հերթափոխի անձնակազմը՝ հերթափոխի պետ, փ/ծ ենթասպա Ս. Հարությունյանի գլխավորությամբ, «1+1» դպրոցական թերթի խմբագիր և համարի պատասխանատու Ռ. Հակոբյանը և «Մարտունու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտական ու ուսուցչական կազմը՝ ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի: ՀՏՈՒ-ի ղեկավար էր հանդիսանում ճամբարակի թիվ 35 ՀՓՁ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյանը:

ՀՏՈՒ-ի նպատակը 1. Ուսումնասիրել օպերատիվ քարտեզ և կատարել ճշգրտումներ:

2. Կատարելագործել հրամանատարական կազմի ունակությունները դպրոցում տարիանման և հրդեհաշիջման աշխատանքներ կազմակերպելու ժամանակ:

3. Կատարելագործել մարտական հաշվարկի պատրաստվածության վիճակը դպրոցում տարիանման, փրկարարական և հրդեհաշիջման աշ-



խատանքներ կատարելիս: ՀՏՈՒ-ի ընթացքում

ժ. 12:00-ին ճամբարակի թիվ 35 ՀՓՁ ահագանգ է ստացվել, որ Մարտունի վարչական բնակավայրի 3-րդ փողոցի 21 հասցեում գտնվող «Մարտունու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հրդեհ է բռնկվել: Ժ. 12:02-ին դեպքի վայր է մեկնել 1-ին մարտական հաշվարկը, որը դեպքի վայր է հասել ժ. 12:20-ին: Դեպքի վայրում ՀՏՈՒ-ի ղեկավար փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյանը տալիս է հրաման հրդեհաշիջման ղեկավար (այսուհետ՝ ՀՇՂ) փ/ծ ենթասպա Ս. Հարությունյանին հետախուզություն անցկացնելու վերաբերյալ: Ժ. 12:25-ին ՀՇՂ փ/ծ ենթասպա Ս. Հարությունյանը ՀՏՈՒ-ի ղեկավար փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյանին զեկուցում է, որ հրդեհ է բռնկվել շենքի 2-րդ հարկում տեղակայված դասասենյակներից մեկում և կրակն ու ծուխը սպառնում են տարածվել դեպի տանիք, միջանցք և հարակից սենյակներ: Շենքի 1-ին հարկի աստիճանավանդակի մոտ կա մեկ աշակերտ, որն ունի ոտքի վնասվածք, իսկ 2-րդ հարկի հրդեհ բռնկված դասասենյակին հարակից դասասենյակում կան երկու աշակերտներ, ովքեր խիտ ծխապատման պատճառով չեն կարողացել դուրս գալ շենքից: ՀՏՈՒ-ի ղեկավար, փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյանը տալիս է հրաման 1-ին հարկում մնացած, ոտքի վնասվածք ստացած աշակերտին պատգարակի միջոցով ապահով դուրս բերելու,

2-րդ հարկի դասասենյակում մնացած աշակերտներին պարանների միջոցով անվտանգ դուրս բերելու, և միաժամանակ կատարելու հրդեհաշիջում: Ամենիջապես ՀՇՂ փ/ծ ենթասպա Ս. Հարությունյանը և օղակի հրամանատար, փ/ծ ավագ Ն. Դավաթյանը ոտքի վնասվածք ստացած աշակերտին պատգարակի միջոցով դուրս են բերում անվտանգ վայր և ցուցաբերում առաջին բուժօգնություն: Հրդեհ-փրկարարներ, փ/ծ ավագ սերժանտ Վ. Թիգյանը, փ/ծ ավագ սերժանտ Ն. Բարսեղյանը և փ/ծ սերժանտ Ա. Ոսկանյանը 2-րդ հարկում մնացած աշակերտներին պարանների միջոցով, դելտա կոչվող հնարքով անվտանգ դուրս են բերում շենքից և անցկացնում հոգեբանական գրույց: Իսկ հրդեհ-փրկարարներ, փ/ծ սերժանտ Ֆ. Դանիելյանը և փ/ծ սերժանտ Ա. Ջառահյանը արդեն իրենց զբաղեցրած դիրքերից հաջողությամբ կատարեցին հրդեհաշիջում: Ժ. 12: 45 - ին ՀՇՂ փ/ծ ենթասպա Ս. Հարությունյանը ՀՏՈՒ-ի ղեկավար փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյանին զեկուցում է շենքում մնացած աշակերտների ապահով դուրս բերման և հրդեհի մեկուսացման մասին: Ժ. 12:50-ին հմուտ կազմակերպված մարտավարության շնորհիվ առանց մարդկային կորուստների և խոշոր նյութական վնասների «Մարտունու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում բռնկված հրդեհը մարվեց: Ժ. 12:55 - ին տրվեց փրկարարական աշխատանքների ավարտ, իսկ ժ. 13:00-ին տրվեց ՀՏՈՒ-ի ավարտ: 1-ին մարտական հաշվարկը ՀՓՁ վերադարձավ ժ. 13:20-ին:

Եզրակացություն ՀՏՈՒ-ն ցույց տվեց, որ ճամբարակի թիվ 35 ՀՓՁ 1-ին հերթափոխի անձնակազմը ունակ է դպրոցում իրականացնել տարիանման, փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքներ: Որպես ՀՇՂ փ/ծ ենթասպա Ս. Հարությունյանը հրամանները տալիս էր հստակ, կայացրած որոշումները արդյունավետ էին և իրավիճակին համապատասխան: ՀՏՈՒ-ի ընթացքում հայտնաբերվեցին որոշակի թերություններ, որոնք էական չէին և վերացվեցին տեղում: Ամփոփման ժամանակ ՀՏՈՒ-ն գնահատվեց բավարար:

ԳՄՓՎ՝ ճամբարակի թիվ 35 ՀՓՁ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյան «1+1» թերթի խմբագրություն

ԱՆՁՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ



Ֆինանսական գրագիտություն, անձնական ֆինանսների կառավարում, արդյունավետ ֆինանսական պլանավորում... Արդի պայմաններում բավականին մոդայիկ բառակապակցություններ, որոնք առաջին հայացքից թվում են որպես մասնագիտական հասկացություններ, սակայն իմաստային տեսանկյունից կրում են կենցաղային բնույթ և ուղեկցում են յուրաքանչյուրիս մեր առօրեական կյանքում: Փորձե՛ք վերլուծել վերոնշյալ հասկացությունները ընդգծելով վերջիններիս դերն ու նշանակությունը մեր կյանքում:

Ֆինանսական գրագիտությունը ըստ էության իրենից ներկայացնում է անձնական ֆինանսների կառավարման հմտությունների ամբողջություն, իսկ անձնական ֆինանսներն իրենց հերթին բնորոշ են հասարակության յուրաքանչյուր անդամի անկախ ռասսայական, սեռային ու տարիքային պատկանելիությունից: Անձնական ֆինանսները ներառում են անհատի եկամուտները, որոնք կարող են ստացվել տարբեր ուղիներից՝ աշխատա-

վարձ, կենսաթոշակ, դրամական փոխանցումներ և այլն: Իսկ եկամուտները մեզ համար ունեն կարևոր նշանակություն, քանի որ եկամտային հատվածում մուտքերի ապահովումը հանդիսանում է երաշխիք ծախսային հոգվածների պատշաճ իրագործման տեսանկյունից:

Խոսելով ծախսերի մասին՝ նշենք, որ ինչպես հայկական, այնպես էլ միջազգային գրականության մեջ վերջիններս ունեն հետևյալ դասակարգումը՝ հաստատուն և փոփոխուն ծախսեր: Հաստատուն ծախսերի թվին են դասվում այն ծախսերը, որոնք պարտադիր կերպով ենթակա են կատարման, և փոփոխուն ծախսեր, որոնք կատարման վրա ինքներս կարող ենք ունենալ անմիջական ազդեցություն, խոսքը վերաբերում է օրինակ հագուստին, ժամանցի կազմակերպմանը, առողջության պահպանմանը: Նկատենք, որ եկամուտների ու ծախսերի միասնական տեսքով ներկայացնումը ստեղծում է անձնական բյուջեի ընդհանրական պատկերը: Փաստենք, որ եկամուտների ու ծախսերի ծավալային համադրման համատեքստում հնարավոր են 3 դեպքեր: Ստորև դիտարկենք այդ դեպքերը առանձին-առանձին:

ԴեՊՔ 1 Եկամուտներ=ծախսեր
Սա այն դեպքն է, երբ գործ ունենք հավասարակշռված բյուջեի հետ, մասնավորապես այն, որ ստացված եկամուտները ամբողջովին բավարարում են նախատեսված ծախսերը կատարելու համար:

ԴեՊՔ 2 Եկամուտներ<ծախսեր
Այս պարագայում իրավիճակը հետևյալն է՝ ստացված եկամուտները չեն բավարարում անհրաժեշտ ծախսերի կատարմանը: Այս դեպքում է, որ գործնականում ֆինանսական շուկայում դրսևորվում է վարկ հասկացությունը: Այսինքն՝ նախատեսված ծախսերի կատարումն ապահովելու նպատակով ձեռք են բերվում լրացուցիչ ֆինանս-

ական միջոցներ, որոնք միաժամանակ ենթադրում են նաև որոշակի ժամանակահատված անց լրացուցիչ միջոցների վերադարձ և հավելյալ տուկոսագումարների վճարում:

ԴեՊՔ 3 Եկամուտներ>ծախսեր
Այս տարբերակը իրականում առավել նախընտրելի է, քանի որ ըստ էության ստացված եկամուտները ոչ միայն բավարարում են անհրաժեշտ ծախսերի կատարմանը, այլև հնարավորություն են տալիս խնայողություններ անելու: Ներդրումների կատարման մյուս ակտիվ եղանակը ենթադրում է մշտական զգոնություն, ֆինանսական շուկաների զարգացման շարժընթացի անընդհատ դիտարկում: Վերջիններիս թվին է դասվում օրինակ ներդրումը բիզնեսում, որի դեպքում նկատենք, որ բացի ֆինանսական շուկայի վերլուծությունից, պահանջվում է նաև մրցակիցների գործունեություն ուսումնասիրություն, մշտապես թարմացվող ռազմավարություն և այլն:

Այսպիսով կարող ենք փաստել, որ ներկայումս ֆինանսական շուկան գերհագեցած է առաջարկվող ծառայությունների բազմազանության տեսանկյունից, և մեզանից յուրաքանչյուրը, ունենալով իր անձնական ֆինանսների շրջանակը, պետք է իրականացնի բյուջեի պլանավորում և կարճաժամկետի և երկարաժամկետի կտրվածքով: Ինչպես նաև իրադարձությունների անկանխատեսելիության և անորոշության տեսանկյունից կարևորվում են նաև խնայողությունները, վերջիններիս օգտագործումը ներդրումային դաշտում, լրացուցիչ եկամուտների ստացումը, ինչն էլ միաժամանակ իր հերթին կարող է ենթադրել նաև ծախսային հոդվածների ընդլայնում, կենսամակարդակի բարձրացում:

Մենք հաջորդ համարներում կանրադառնանք եկամուտներին ու ծախսերին:

Ալլա Սարգսյան

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՏԵՐ, ՈՐՈՒՔ ՓՈԽԵՑԻՆ ԱՇԽԱՏՐՁ
Միացյալ Նահանգների հիմնադիրներից մեկն է Բենջամին Ֆրանկլինը: Գյուտարարությունը նա սկսել է 12 տարեկանից, երբ աշխարհում առաջինը ստեղծեց լողալու լողակները: Միանգամից իր հասակակիցների մոտ նա դարձավ հարգված և սիրված: Բենջամինը զննաց ավելի առաջ և ստեղծեց երկկողմանի լինգաներ, ճոճ-

վող աթոռ, վառարան առանց ծխի: Նրա գլխավոր գյուտը դարձավ Ամերիկայի Միացյալ Նահանգները, ավելի ճիշտ՝ «Անկախության դեկլարացիան», որի ստեղծման համար Ֆրանկլինը մեծ ջանքեր գործադրեց: Այդ օրվանից՝ հունվարի 17-ից, նշվում է մանկական գյուտարարության միջազգային օր:
«1+1» թերթի խմբագրություն

ԵՐԵՎԱՆԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Ժամանակակից աշխարհում օրեցօր ավելանում են լրատվական հոսքերը: Այդ պատճառով էլ մեր դպրոցականները պետք է ոչ միայն գիտելիքներ ունենան, այլև ունակություն կողմնորոշվելու այդ տեղեկատվական հոսքում, անել մտածված ընտրություն, ունենալ նպատակներ, ընդունել ինքնուրույն որոշումներ, լինել ճկուն և առաջադեմ առօրյա հարցերում, այսինքն՝ լինել ստեղծագործ անձնավորություն: Այսօր աշխարհում ստեղծագործ երեխաների դաստիարակումը առաջնային խնդիր է ու-

սումնական հաստատություններում: Ստեղծագործ կարողություններ ունի յուրաքանչյուր երեխա, բայց նրա ունակության զարգացումը կախված է նրանից, թե ովքեր են այդ երեխային դաստիարակողները և ինչպես են ընդունում երեխայի այդ հատկությունը:
Է. Ֆորմանի կոնցեպցիայի համապատասխան էթե երեխայի զբաղվածությանը չստանա իր նպատակակետը, այդ դեպքում այդ երեխայի մոտ կսկսվի հակառակ ավերող ունակությունը:

ԱԶԳԱՅԻՆ ԱՏՈՒԳԱՏԵՍ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ազգային ստուգատեսի շրջանակներում Գեղարքունիքի մարզի դպրոցներից ընդգրկվել էր նաև Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցը, որտեղ ներկա էր ԳԹԿ-ի նեկայացուցիչ Միրցա Հալաջյանը, ով սիրով պատասխանեց մեր հարցերին:

Հարց-Ի՞նչ նպատակով է ընտրված 8-րդ դասարանը, որը դեռ քննական համակարգին ծանոթ չէ:

Պատասխան- Ավելի լավ, որ քննական դասարան չէ, և երեխաները կողմնորոշված չեն կոնկրետ քննության և քննական առարկաների վրա, քանի որ այդ առարկաները նրանք պարապում են, այդ նպատակով էլ ընտրված է 8-րդ դասարանը: Բացի դրանից, Tims միջազգային ստուգատեսը անցկացվել է 4-8-րդ դասարաններում, այդ փաստը կողմնորոշիչ ընդունելով ընտրել ենք 8-րդ դասարանը: Սա հետազոտություն է ոչ միայն գիտելիքների, այլ ընդհանուր զարգացման ստուգում է, և նպատակն է ստուգել ոչ միայն դպրոցում ստացած գիտելիքները, այլև երեխայի ընդհանուր զարգացման մակարդակը, որից հետո մենք վերլուծում ենք և պարզում, թե այդ գիտելիքը երեխան որտեղից ունի, որտեղից կարող է վերցնել կամ ստանալ: Կարող է այդ գիտելիքը նա ստացել է ընտանիքից, հեռուստացույցից, հարևանից կամ իր ինքնակրթության հետևանքն է: Հարցերը ըստ այդմ են կազմված, չենք շրջանցել նաև դպրոցական ծրագիրը:

Թեստերը կազմված են հետաքրքիր ոճով, այսինքն չոր հարցեր չեն, երեխան պետք է կռահի ինչ է պահանջվում, կռահելով կարողանա պատասխանել: Ազգային ստուգատեսով վեր ենք հանում երեխայի ինքնակրթության աստիճանը:

Հ.- Մեր պետությունում կրթությունը լիարժեք



համարում եք:

Պ.- Որևէ պետության մեջ և որևէ ժամանակում կրթությունը լիարժեք չի կարող լինել, կամ մենք բավարարված լինենք այդ պահանջով: Մենք միշտ ձգտում ենք կատարելագործվելու և ավելի լավին հասնելու:

Հ.- Տարվա ընթացքում մշակում եք այնպիսի ծրագրեր, որոնք կկարողանաք իրագործել: Մասնակցում եք դասագրքերի կազմման գործընթացին:

Պ.-Մենք չենք մասնակցում ծրագրերի մշակմանը, բայց առաջնորդվում և կողմնորոշվում ենք մշակված ծրագրով: Դասագրքերի կազմման գործընթացին մենք չենք մասնակցում, բայց, առաջնորդվելով դասագրքերի համապատասխան մշակված ծրագրերից, կազմում ենք թեստեր:

Հ.- Ինչպիսի՞ն է Ձեր համագործակցությունը հանրակրթական դպրոցների հետ, ի՞նչ եք նախատեսում ապագայում:

Պ.- Մենք արդեն շուրջ 10 տարի անցկացնում ենք ազգային ստուգատեսներ թե՛ հայագիտա-

կան, թե՛ բնագիտական և թե՛ օտար լեզուներից, ունենք ընթացիկ քննություններ, որոնք շատ են տարբերվում ազգային ստուգատեսներից: Ազգային ստուգատեսը ազատ է, այնտեղ ստուգվում են աշակերտի կարողությունները և հմտությունները, տրամաբանությունը, իսկ քննություններում աշակերտը գնահատվում է:

Հ.- Ի՞նչ եք մտածում հեռավար ուսուցման վերաբերյալ:

Պ.- Իմ անհատի կարծիքն է, որ հեռավար կրթությունը չի կարող ունենալ այն արդյունքը, ինչ առկա ուսուցումը:

Հ.- Ի՞նչ կարծիք ունեք այսօրվա մեր սերնդի մասին:

Պ.- Իմ անձնական կարծիքը այն է, որ մեր սերունդը աճում և զարգանում է, կան բացառիկ երեխաներ, բայց մենք միշտ ձգտում ենք ամենալավին, բայց միայն ասեն, որ անապատային վիճակ չէ, այն կախված է մեզանից, եթե ցանկանանք այն ավելի կծաղկի:

Հ.- Ձեր կարծիքով կրթական համակարգում կա մի բան, որը փոփոխման ենթակա է:

Պ.- Ես անհատական կոտետեմ այդ հարցին, պետք է փոխել թե՛ ծրագրերը և թե՛ ուսուցման մեթոդը: Փոփոխությունը միշտ բերում է լավի, և կարող ենք համեմատականով որոշել և տարբերակել:

Հ.- Ի՞նչ կմաղթեք մեր սերնդին:

Պ.- Մեր սերնդին մաղթում են խաղաղություն, կայունություն, անվտանգություն, որպեսզի մեր ուժերը կենտրոնանան հայրենիքը ծաղկեցնելու և զարգացնելու վրա, որպեսզի այնքան հանգիստ լինենք և ապահով, որ միայն մտածենք գիտության և մշակույթի զարգացման գործընթացի մասին:

Հնորհակալություն ենք հայտնում տիկին Միրցա Հալաջյանին հարցազրույցի համար:


ՆԱՍԱԿ ԱՓՅՈՒՔԱՄԱՅ ԱՆՃԱՆՈՒՆ

Բարև ձեզ, իմ սիյունքա-հայ անձանոթ ընկերներ: Ձեզ գրում է Վիկան: Ես տասը տարեկան եմ, ապրում եմ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղում, սովորում եմ նույն գյուղի միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանում: Ես շատ եմ սիրում իմ ծննդավայրը: Երեք տարի ապրել եմ արտերկրում և միայն վերադառնալուց հետո հասկացա, որ թերևս ծննդավայրը, հարազատները, հայրենիքն ու այնտեղ թողած հուշերն են այն անփոխարինելի և հոգեհարազատը, որ երբևէ կարող են մարդու ծիծաղը լիաթոք դարձնել և խեղդել ծննդավայրի անհագ կարոտը: Իմ ծննդավայրը գտնվում է Գեղամա լեռների փեշին: Գյուղի միջով հոսում է Գավառագետը: Բնությունն այնքան գեղեցիկ ու յուրօրինակ է, որ ոչ մի տեղ չես հանդիպի: Ամենուրեք մաքուր ու թարմ օդ է: Մարդիկ բարի են և աշխատասեր, հյուրասիրության մասին էլ չեն ասում, դա պետք է զգալ: Խոսքերով չեն



կարող նկարագրել իմ բնակավայրի գեղեցկությունը՝ բնության հրաշագործությունները, վանքերն ու մատուռները, այն պետք է տեսնել սեփական աչքերով: Սիրով ձեզ կսպասեմ իմ բնակավայրում, կհյուրընկալեմ ու կծանոթացնեմ նրա պատմությանն ու մշակույթին:

Սիրով՝ Վիկայից իր սիյունքա-հայ անձանոթ ընկերներին:



Աննա Գևորգյան



ԿՐԻՐ ԴԻՄԱԿ, ՓՐԿԻՐ ԿՅԱՆՔԵՐ

4 «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1 Փոստային դասիչ՝ 1207 Թողարկման օրը՝ 27. 03. 2021 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան Տպաքանակ՝ 2000 Հեռախոս՝ 093919658: Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru Կայք էջ՝ 1և1.հայ , 1u1.am